



ՄՆՆԴԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ 2-ՐԴ B-FOST
2018 ՀԱՄԱԺՈՂՈՎ

15-17 հոկտեմբեր, 2018 Երևան, Հայաստան

ՄՆՆԴԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

2-ՐԴ B-FoST ՀԱՄԱԺՈՂՈՎ, 2018

Ուրախ ենք տեղեկացնել Սննդի Գիտության և Տեխնոլոգիաների Սևծովյան
Ասոցիացիայի 2-րդ համաժողովին մասնակցելու հնարավորության
մասին, որը տեղի կունենա 2018 թ. հոկտեմբերի 15-17, Երևանում



2-րդ B-FoST 2018 համաժողովի կազմակերպչական կոմիտեն ուրախ է տեղեկացնել Ձեզ տեղի ունեցող համաժողովի մասին, որը լավ հնարավորություն կընձեռի Ձեզ ներկայացնելու ձեր մասնագիտական աշխատանքները:

2-րդ B-FoST համաժողովի մասնակցությունը ընձեռնում է Ձեզ գերազանց և եզակի հնարավորություն գտնել նոր հաճախորդներ, ստեղծել մասնագիտական ցանց, փնտրել բիզնեսի համար նոր հնարավորություններ, ներկայացնել սննդարդյունաբերական սարքավորումներ և սննդամթերքի արտադրության ոլորտում նորարարական արտադրանքներ, սարքավորումներ, նյութեր և ծառայություններ: Այս միջոցառմանը հնարավորություն կստեղծի մեկ վայրում ներգրավելու ավելի քան 200 մասնակիցների:

2-րդ B-FoST համաժողովը նվիրված է հիմնարար և կիրառական սննդագիտության, հիգիենիկ ինժեներիայի և նախագծման, սննդի կեղծումների, սննդի արդյունաբերության նոր տեխնոլոգիաների, սննդամթերքի անվտանգության օրենքների և կանոնակարգերի, սննդամթերքի փորձաքննության և որակի վերահսկողության, սննդամթերքի անվտանգության մանրէաբանական և քիմիական կողմերի, սնման, առողջության և սննդի տեխնոլոգիայի, սննդի արդյունաբերությունում մաքրման, լվացման և ախտահանման ընթացակարգերի բնագավառներում տեղի ունեցող վերջին զարգացումներին:


Բոլոր մասնագիտացված ընկերությունները, հաստատություններն ու մատակարարները հրավիրված են ներկայացնելու իրենց վերջին արտադրանքներն ու ծառայությունները համաժողովի շրջանակներում կազմակերպվող ցուցահանդեսում:

Ցուցահանդեսը նախատեսում է ներկայացնել տարածաշրջանային սննդամթերքի արտադրության լայն տեսականի: Միջոցառումները, ինչպիսիք են B2B հանդիպումները, հնարավորություն կընձեռեն նոր կապեր հաստատել և զարգացնել գործնական հարաբերությունները:

**ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ Է ՍԵՎԾՈՎՅԱՆ ՍՆՆԴԻ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ (B-FOST) և ՍՆՆԴԻ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ASFOST)
ԿՈՂՄԻՑ:**



Համաժողովը կազմակերպվում է հետևյալ ընկերությունների աջակցությամբ



Համաժողովի պաշտոնական լեզուն անգլերենն է նաև լինելու է սինխրոն թարգմանություն:

Գրանցման և վճարման պայմանները

Բոլոր մասնակիցներին խնդրում ենք նախապես գրանցվել առցանց՝ լրացնելով և ներկայացնելով այս էջում տրված գրանցման թերթիկը:

Վաղաժամկետ գրանցման ավելի ցածր վճարներից օգտվելու համար, խնդրում ենք գրանցվել մինչև **հոկտեմբերի 10, 2018:**

Առցանց գրանցման ձևը ներկայացնելուց հետո **դուք կստանաք էլեկտրոնային նամակ՝ հետագա վճարման հրահանգներով:**

Գրանցման վճարները

Գրանցման վճար	Մինչև հոկտեմբերի 10, 2018 (<< դրամ)
Լրիվ գրանցման վճար*	40,000
Գրանցման վճար ուսանողների համար*	20,000
Ուղեկցող անձի գրանցման վճար	20,000
Ժամանցային ծրագիր 1 (15.10.2018)	10,000
Ժամանցային ծրագիր 2 (17.10.2018)	12,000

*EHEDG, EFFOST, GHI, IUFoST և ISEKI ասոցիացիաների անդամները վճարում են 10,000 դրամ զեղչով:

Գրանցման վճարը ներառում է՝

- Մասնակցություն գիտական նիստերին, մուտք ցուցահանդեսային ու պաստառային տարածքներ
- Սեղմագրերի գիրք (տպագիր կամ էլեկտրոնային տարբերակ)
- Մասնակցություն ճաշին և սուրճի ընդմիջումներին

Վճարման մանրամասները

Տեղական հաշիվ

Շահառու՝	«ՖՈՒԴԼԱԲ ՍԱՅՆԹԻՖԻԲ» ՍՊԸ
Հասցե՝	0025, ԶԶ, ք. Երևան, Չարենցի 4-117
Հաշվեհամար՝	24100395248800 AMD
ՀՎՀՀ՝	02637355
Բանկի անվանումը՝	UNIBANK
Բանկի հասցե	ՀՀ, ք. Երևան, Չարենց 12-53, 1-5,
Հստակեցում՝	B-FoST 2018 համաժողովի գրանցման վճար

Լրացուցիչ հարցերի համար խնդրում ենք դիմել

Գոհար Բաղայան, տ.գ.թ.

EHEDG- ի հայաստանյան տարածաշրջանային բաժնի
համանախագահ

ASFoST

Հեռ.՝ + (374) 43 800050

Էլ. փոստ՝ asfost2010@gmail.com

Համաժողովի նախագահ
ASFoST-ի նախագահ, EHEDG- ի հայաստանյան տարածաշրջանային բաժնի՝
Դոկտոր՝ Կարինե Գրիգորյան

